

Որոշ պետական և մասնավոր նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման մասին 85/337/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդի 1997 թվականի մարտի 3-ի 97/11/ԵՀ հրահանգ

*Պաշտոնական տեղեկագիր L 073, 14/03/1997թ., էջ 0015:*

Որոշ պետական և մասնավոր նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման մասին 85/337/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդի 1997 թվականի մարտի 3-ի 97/11/ԵՀ հրահանգ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 130(Ժթ)(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

գործելով Պայմանագրի 189գ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (4),

1) քանի որ «Որոշ պետական և մասնավոր նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման մասին» Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի 85/337/ԵՏՀ հրահանգի (5) նպատակը իրավասու մարմիններին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումն է՝ հնարավորություն տալով նրանց որոշում կայացնել կոնկրետ ծրագրի վերաբերյալ՝ քաջ գիտակցելով ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա հավանական զգալի ազդեցությունը, քանի որ Պայմանագրի և Շրջակա միջավայրի ու կայուն զարգացման քաղաքականության և գործողությունների՝ Համայնքի հինգերորդ ծրագրի 130Ժը հոդվածով սահմանված կարգով գնահատման ընթացակարգը շրջակա միջավայրի քաղաքականության հիմնական գործիքն է,

2) քանի որ Պայմանագրի 130-րդ (2) հոդվածի համաձայն շրջակա միջավայրի վերաբերյալ Համայնքի քաղաքականությունը հիմնված է նախագուշացման և կանխարգելման սկզբունքների վրա, այն է՝ շրջակա միջավայրին հասցված վնասը պետք է առաջնային կերպով աղբյուրի մոտ վերացվի, իսկ աղտոտողը պետք է վճարի,

3) քանի որ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման հիմնական սկզբունքները պետք է ներդաշնակեցվեն, և քանի որ անդամ պետությունները կարող են սահմանել առավել խիստ կանոններ՝ պաշտպանելու համար շրջակա միջավայրը,

4) քանի որ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման արդյունքում ձեռք բերված փորձը, որի մասին նշվել է Հանձնաժողովի 1993 թվականի ապրիլի 2-ին ընդունված 85/337/ԵՏՀ հրահանգի իրականացման մասին զեկույցում, ցույց է տալիս, որ անհրաժեշտ է դրույթներ ներմուծել՝ պարզաբանելու, լրացնելու և կատարելագործելու գնահատման ընթացակարգի կանոնները, որպեսզի ապահովվի հրահանգի ներդաշնակ և արդյունավետ կիրարկումը,

5) քանի որ գնահատման ենթակա նախագծերը պետք է ենթարկվեն ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու պահանջին, քանի որ գնահատումը պետք է իրականացվի՝ նախքան թույլտվություն տալը,

6) քանի որ նպատակահարմար է փոփոխություններ կատարել այն նախագծերի ցանկում, որոնք զգալի ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա, և որոնք, այդ պատճառով, որպես կանոն, պետք է ենթարկվեն համակարգված գնահատման,

7) քանի որ մյուս տեսակի նախագծերը ոչ մի դեպքում չեն կարող զգալի ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, և քանի որ այդ նախագծերը պետք է գնահատվեն, եթե անդամ պետությունները համարում են, որ դրանք ամենայն հավանականությամբ զգալի ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա,

8) քանի որ անդամ պետությունները կարող են սահմանել շեմերը կամ չափորոշիչները՝ որոշելու համար, թե որ նշված նախագծերը պետք է գնահատվեն իրենց շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության կարևորության հիման վրա, քանի որ անդամ պետություններից չպետք է պահանջվի յուրաքանչյուր դեպքի համար ուսումնասիրել նշված շեմերից ցածր կամ նշված չափորոշիչներին չհամապատասխանող նախագծերը,

9) քանի որ շեմերը կամ չափորոշիչները սահմանելիս կամ յուրաքանչյուր դեպքի համար նախագծերն ուսումնասիրելիս նպատակ ունենալով որոշելու, թե որ նախագիծը պետք է ենթարկվի գնահատման՝ կախված դրանց՝ շրջակա միջավայրի վրա ունեցած զգալի ազդեցությունից, անդամ պետությունները պետք է հաշվի առնեն սույն Հրահանգով սահմանված ընտրության համապատասխան չափորոշիչները, քանի որ, սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, անդամ պետությունները հատուկ դեպքերում նշված չափորոշիչները կիրառելու լավագույն դիրքում են գտնվում,

10) քանի որ «Վայրի թռչունների պահպանության մասին» Խորհրդի 1979 թվականի ապրիլի 2-ի 79/409/ԵՏՀ հրահանգի (6) և «բնակչության բնական վայր և կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին» Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգի (7) համաձայն՝ անդամ պետությունների կողմից սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքների տեղակայման չափորոշիչի կիրառումն անպայման չէ, որ նշված տարածքներում սույն Հրահանգի համաձայն այդ նախագծերի ինքնաբերաբար գնահատում ենթադրի,

11) քանի որ նպատակահարմար է ներմուծել այնպիսի ընթացակարգ, որպեսզի հնարավորություն տրվի նախագիծ մշակողին իրավասու մարմիններից կարծիք ստանալու այն տեղեկությունների բովանդակության և չափի մասին, որոնք պետք է մշակվեն և տրամադրվեն գնահատման համար, քանի որ անդամ պետությունները սույն ընթացակարգի շրջանակներում կարող են պահանջել նախագիծ մշակողներից, մասնավորապես, տրամադրելու նախագծերի այլընտրանքային տարբերակները, որոնց համար այն նախատեսում է դիմում ներկայացնել,

12) քանի որ ցանկալի է ամրապնդել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման վերաբերյալ դրույթներն անդրսահմանային համատեքստում՝ հաշվի առնելով միջազգային մակարդակով զարգացումները,

13) քանի որ Համայնքն ստորագրեց Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին 1991 թվականի փետրվարի 25-ի կոնվենցիան,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### Հոդված 1

#### Սույնով 85/337/ԵՏՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 2(1) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անդամ պետություններն ընդունում են բոլոր անհրաժեշտ միջոցները, ապահովելու, որ մինչև իրականացման համար թույլտվություն տալը, այն նախագծերին, որոնք, մասնավորապես, պայմանավորված իրենց բնույթով, մասշտաբով կամ տեղակայման վայրով, շրջակա միջավայրի վրա ունեն գգալի հնարավոր ազդեցություններ, ներկայացվեն ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվության և այդ նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման պահանջ: Նշված նախագծերը սահմանվում են 4-րդ հոդվածով՝,

2. 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«2ա. Անդամ պետությունները կարող են նախատեսել միասնական ընթացակարգ՝ սույն Հրահանգի պահանջները և «Աղտոտման համատեղ կանխարգելման ու հսկողության մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգի պահանջները կատարելու նպատակով (1):

1) ՊՏ թիվ L 257, 10. 10. 1996թ., էջ 26:».

3. 2-րդ հոդվածի (3) առաջին ենթապարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Չհակասելով 7-րդ հոդվածին՝ անդամ պետությունները կարող են բացառիկ դեպքերում կոնկրետ ծրագրի նկատմամբ չկիրառել սույն Հրահանգով սահմանված դրույթներն ամբողջությամբ կամ մասամբ:»:

4. 2(3)(գ) հոդվածում «հնարավորության դեպքում» բառը փոխարինել «անհրաժեշտության դեպքում» բառով.

5. 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 3

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքում, համապատասխան ձևով, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին դեպքի համար և 4-11-րդ հոդվածներին համապատասխան, սահմանվում, նկարագրվում և գնահատվում են հետևյալ գործոնների վրա ծրագրի թողած ուղղակի և անուղղակի ազդեցությունները՝

- մարդիկ, բուսական և կենդանական աշխարհ.

- հող, ջուր, օդ, կլիմա և լանդշաֆտ.

- նյութական ակտիվներ և մշակութային ժառանգություն.

- առաջին, երկրորդ և երրորդ պարբերություններում նշված գործոնների փոխազդեցությունը:»:

6. 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 4

1. Պահպանելով 2(3) հոդվածը՝ I հավելվածում թվարկված նախագծերը պետք է ենթարկվեն գնահատման՝ 5-10-րդ հոդվածներին համապատասխան:

2. Պահպանելով 2 (3) հոդվածը՝ II հավելվածում թվարկված նախագծերի համար անդամ պետությունները սահմանում են հետևյալի միջոցով՝

ա) ըստ դեպքերի ուսումնասիրություն

կամ

բ) անդամ պետության կողմից սահմանված շեմեր կամ չափորոշիչներ:

թե արդյոք նախագիծը պետք է ենթարկվի գնահատման՝ 5-10-րդ հոդվածներին համապատասխան:

Անդամ պետությունները կարող են որոշել՝ կիրառել (ա) և (բ) կետերում նշված երկու ընթացակարգերն էլ:

3. Եթե ըստ դեպքերի ուսումնասիրություն է իրականացվում կամ 2-րդ պարբերության նպատակներով շեմեր կամ չափանիշներ են սահմանվում, ապա անհրաժեշտ է հաշվի առնել III հավելվածով սահմանված համապատասխան ընտրության չափանիշները:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ, 2-րդ պարբերության համաձայն, իրավասու մարմինների կողմից կատարված սահմանումը մատչելի լինի հանրության համար:».

7. 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 5

1. Այն նախագծերի դեպքում, որոնք, 4-րդ հոդվածի համաձայն, պետք է ենթարկվեն 5-10-րդ հոդվածներին համապատասխան շրջակա միջավայրի վրա թողած ազդեցության գնահատման, անդամ պետություններն ընդունում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ նախագիծ մշակողը պատշաճ կերպով տրամադրի IV հավելվածում նշված տեղեկություններն այնքանով, որքանով՝

ա) անդամ պետությունները համարում են, որ տեղեկությունները կարևոր են՝ թույլտվություն տալու ընթացակարգի տվյալ փուլի և կոնկրետ ծրագրի կամ ծրագրի տեսակի և ազդեցության ենթարկվող բնապահպանական հատկանիշների կոնկրետ առանձնահատկությունների համար.

բ) անդամ պետությունները համարում են, որ նախագիծ մշակողից հնարավոր է ողջամտության սահմաններում պահանջել նշված տեղեկությունների հավաքումը, մասնավորապես, հաշվի առնելով առկա գիտելիքները և գնահատման մեթոդները:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ, եթե նախագիծ մշակողը, մինչև աշխատանքների իրականացման

թույլտվության համար դիմում ներկայացնելը, պահանջի, իրավասու մարմինը կարծիք ներկայացնի 1-ին պարբերությանը համապատասխան նախագիծ մշակողի կողմից տրամադրվող տեղեկությունների մասին: Իրավասու մարմինը պետք է խորհրդակցի 6(1) պարբերության մեջ նշված նախագիծ մշակողի և իրավասու մարմինների հետ, մինչև վերջինս կտրամադրի իր կարծիքը: Այն փաստը, որ իրավասու մարմինը, սույն պարբերության համաձայն, կարծիք է ներկայացրել, չի նշանակում, որ վերջինս ազատվում է նախագիծ մշակողից հետագայում լրացուցիչ տեղեկություններ պահանջելու պարտականությունից:

Անդամ պետությունները կարող են իրավասու մարմիններից պահանջել ներկայացնել իրենց կարծիքը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք նախագիծ մշակողն այն պահանջում է, թե ոչ:

3. Առաջին պարբերությանը համապատասխան՝ նախագիծ մշակողի կողմից տրամադրվելիք տեղեկությունները պետք է առնվազն ներառեն՝

- ծրագրի նկարագրությունը, այն է՝ ծրագրի իրականացման վայրի, նախագծման և մասշտաբի մասին տեղեկությունները.

- զգալի բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու և, հնարավորության դեպքում, վերացնելու համար նախատեսվող միջոցների նկարագրությունը.

- շրջակա միջավայրի վրա ծրագրի հնարավոր հիմնական ազդեցությունները բացահայտելու և գնահատելու համար անհրաժեշտ տեղեկությունները.

- նախագիծ մշակողի կողմից ուսումնասիրվող հիմնական այլընտրանքային եղանակների ուրվագիծը և այս ընտրության հիմնական պատճառների նշումը՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա թողած ազդեցությունները.

- նախորդ պարբերություններում նշված տեղեկությունների ոչ տեխնիկական ամփոփ նկարագիրը:

4. Անդամ պետությունները, անհրաժեշտության դեպքում, ապահովում են, որ բոլոր այն իրավասու մարմինները, որոնք տնօրինում են համապատասխան

տեղեկությունները, կատարելով հատուկ հղում 3-րդ հոդվածին, դրանք մատչելի դարձնեն նախագիծ մշակողի համար:».

8. 6(1) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ իրավասու մարմիններին, որոնք հավանաբար շահագրգռված են ծրագրով, ելնելով շրջակա միջավայրի նկատմամբ իրենց կոնկրետ պատասխանատվություններից, հնարավորություն ընձեռնվի՝ իրենց կարծիքը ներկայացնելու նախագիծը մշակողի կողմից տրամադրվող տեղեկությունների և ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումի վերաբերյալ: Անդամ պետություններն այս նպատակով մարմիններ են նշանակում՝ ընդհանուր պայմաններով կամ կոնկրետ դեպքերից ելնելով՝ նրանց հետ խորհրդակցելու նպատակով: Հինգերորդ պարբերության համաձայն հավաքված տեղեկություններն ուղարկվում են այդ մարմիններ: Խորհրդակցության համար մանրամասն միջոցառումները սահմանվում են անդամ պետությունների կողմից:».

6(2) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Անդամ պետություններն ապահովում են, որ ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու համար ցանկացած պահանջ և 5-րդ հոդվածի համաձայն հավաքված ցանկացած տեղեկություն մատչելի լինի հասարակության համար ողջամիտ ժամկետում, որպեսզի շահագրգիռ հասարակությանը հնարավորություն տրվի արտահայտելու իր կարծիքը՝ նախքան ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվությունն ստանալը:».

9. 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 7

1. Եթե անդամ պետությունն իրազեկ է, որ նախագիծը հավանաբար կարող է զգալի ազդեցություններ ունենալ մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, կամ եթե անդամ պետությունը կարող է, ամենայն հավանականությամբ, զգալի ազդեցություններ կրել ըստ պահանջների, ապա այն անդամ պետությունը,



որի տարածքում նախագիծը կարող է իրականացվել, ուղարկում է ազդեցություն կրած անդամ պետությանը հնարավորիս շուտ և ոչ ուշ, քան իր հանրությանը տեղեկացնելը, մասնավորապես՝

ա) ծրագրի նկարագրությունը՝ վերջինիս միջսահմանային ազդեցության մասին բոլոր մատչելի տեղեկությունների հետ մեկտեղ.

բ) ընդունվելիք որոշման բնույթի մասին տեղեկությունները,

և այլ անդամ պետությանը տրամադրում է ողջամիտ ժամկետ, որի ընթացքում պետք է նշի, թե արդյոք այն ցանկանում է մասնակցել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման ընթացակարգին և կարող է ներառել 2-րդ պարբերության մեջ նշված տեղեկությունները:

2. Եթե այն անդամ պետությունը, որը 1-ին պարբերության համաձայն, տեղեկություններ է ստանում, նշում է, որ մտադիր է մասնակցել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման ընթացակարգին, ապա այն անդամ պետությունը, որի տարածքում նախագիծը պետք է իրականացվի, ուղարկում է ազդեցություն կրած անդամ պետություն, եթե դեռ չի ուղարկել, 5-րդ հոդվածի համաձայն հավաքված տեղեկությունները և նշված ընթացակարգին՝ այդ թվում՝ ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու համար պահանջին վերաբերող համապատասխան տեղեկությունները:

3. Շահագրգիռ անդամ պետությունները, յուրաքանչյուրն այնքանով, որքանով հետաքրքրված է՝

ա) կազմակերպում է նաև 1-ին և 2-րդ պարբերության մեջ նշված տեղեկությունների՝ ողջամիտ ժամկետում 6(1) հոդվածում նշված մարմինների և շահագրգիռ հասարակության համար զգալի ազդեցություն կրած անդամ պետության տարածքում մատչելիությունը, և

բ) ապահովում է, որ նշված մարմիններին և շահագրգիռ հասարակությանը հնարավորություն ընձեռնվի, մինչև ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվությունը տալը, ողջամիտ ժամկետներում իրենց կարծիքն ուղարկվի այն

անդամ պետության իրավասու մարմինն տրամադրվող տեղեկությունների մասին, որի տարածքում այդ նախագիծը կարող է իրականացվել:

4. Շահագրգիռ անդամ պետությունները մասնակցում են խորհրդակցություններին, մասնավորապես, կապված ծրագրի հնարավոր միջսահմանային ազդեցությունների և դրանք նվազեցնելու ու վերացնելու համար նախատեսված միջոցառումների հետ և համաձայնության են գալիս խորհրդակցության ժամանակահատվածի տևողության ողջամիտ ժամկետի շուրջ:

5. Սույն հոդվածի դրույթների իրականացման մանրամասն ընթացակարգերը կարող են որոշվել համապատասխան անդամ պետությունների կողմից:».

10. 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 8

Խորհրդակցությունների արդյունքները և 5-րդ, 6-րդ ու 7-րդ հոդվածների համաձայն հավաքված տեղեկությունները պետք է հաշվի առնվեն ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու ընթացակարգի մեջ:

11. 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 9

1. Ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվություն տալու կամ մերժելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո իրավասու մարմինը կամ մարմինները դրա մասին, համապատասխան ընթացակարգերին համապատասխան, տեղեկացնում են հանրությանը: Հանրության համար մատչելի են դարձվում հետևյալ տեղեկությունները՝

- որոշման բովանդակությունը և դրան կից ներկայացվող բոլոր պայմանները.

– որոշումը կայացնելու հիմնական պատճառներն ու դիտարկումները.

- անհրաժեշտության դեպքում հիմնական բացասական հետևանքներից խուսափելուն, դրանք նվազեցնելուն և հնարավորության դեպքում կանխելուն ուղղված հիմնական միջոցների նկարագրությունը:

2. Իրավասու մարմինը կամ մարմինները տեղեկացնում են ցանկացած այն անդամ պետությանը, որի հետ խորհրդակցություն է կատարվել 7-րդ հոդվածի համաձայն՝ ուղարկելով դրան 1-ին պարբերության մեջ նշված տեղեկությունները:».

12. 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 10

Սույն Հրահանգի դրույթները չպետք է ազդեն ազգային կանոնակարգերով և վարչական ակտերով սահմանված սահմանափակումներին հետևելու իրավասու մարմինների պարտավորության, ինչպես նաև առևտրային ու արդյունաբերական գաղտնիության մասով ընդունված իրավական պրակտիկայի, այդ թվում՝ մտավոր սեփականության և հանրային շահի պաշտպանության վրա:

Եթե կիրառվում է 7-րդ հոդվածը, ապա մեկ այլ անդամ պետության տեղեկություններ փոխանցելը և մեկ այլ անդամ պետության կողմից տեղեկություններ ստանալը ենթարկվում է այն անդամ պետությունում գործող սահմանափակումներին, որտեղ առաջարկվում է իրականացնել նախագիծը:».

13. 11(2) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Անդամ պետությունները, մասնավորապես, տեղեկացնում են Հանձնաժողովին, 4(2) հոդվածին համապատասխան, ծրագրի ընտրության համար ընդունված ցանկացած չափորոշիչի և (կամ) շեմի մասին:».

14. 13-րդ հոդվածը հանել:

15. I, II և III հավելվածները փոխարինվում են I, II, III և IV հավելվածներով այնպես, ինչպես ներկայացվում են հավելվածում:

## Հոդված 2

Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ է ուղարկում սույն Հրահանգով փոփոխված 85/337/ԵՏՀ հրահանգի կիրարկման և արդյունավետության մասին

զեկույցը: Ձեկույցը հիմնված է 11(1) և (2) հոդվածով նախատեսված տեղեկությունների փոխանակման վրա:

Սույն Ձեկույցի հիման վրա Հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, Խորհուրդ է ներկայացնում լրացուցիչ առաջարկներ՝ սույն Հրահանգի կիրարկման համաձայնեցումն ապահովելու նպատակով:

### **Հոդված 3**

1. Սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերն անդամ պետությունները պետք է ամենաուշը՝ մինչև 1999 թվականի մարտի 14-ը, գործողության մեջ դնեն: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է սույն Հրահանգին կատարվող հղում պարունակեն կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ իրենց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու կարգը հաստատվում է անդամ պետությունների կողմից:

2. Եթե ծրագրի աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու համար պահանջը ներկայացվում է իրավասու մարմին՝ նախքան 1-ին պարբերության մեջ սահմանված ժամկետը, ապա 85/337/ԵՏՀ հրահանգի դրույթները շարունակում են գործել՝ նախքան նշված փոփոխությունները:

### **Հոդված 4**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

### **Հոդված 5**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1997 թվականի մարտի 3-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Մ. Դե Բոեր

1) ՊՏ թիվ C 130, 12.05.1994թ., էջ 8 և

ՊՏ թիվ C 81, 19. 03. 1996 թ., էջ 14:

2) ՊՏ, թիվ C 393, 31. 12. 1994թ., էջ 1:

3) ՊՏ, թիվ C 210, 14. 08. 1995թ., էջ 78:

4) Եվրոպական պառլամենտի 1995 թվականի հոկտեմբերի 11-ի եզրակացություն (ՊՏ C 287, 30.10.1995թ., էջ 101), Խորհրդի 1996 թվականի հունիսի 25-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 248, 26. 08. 1996թ., էջ 75) և Եվրոպական պառլամենտի 1996 թվականի նոյեմբերի 13-ի որոշում (ՊՏ C 362, 02. 12. 1996թ., էջ 103):

5) ՊՏ թիվ L 175, 05.1985թ., էջ 7: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:

6) ՊՏ թիվ L 103, 25.04. 1979թ., էջ 1: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:

7) ՊՏ թիվ L 206, 22. 07. 1992թ., էջ 7:

## ՀԱՎԵԼՎԱԾ

### «ՀԱՎԵԼՎԱԾ I

#### 4 (1) ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԸ

1. Նավթամշակման գործարաններ (բացառությամբ այն ձեռնարկությունների, որոնք չմշակված նավթից ստանում են միայն քայուղեր) և օրական 500 տոննայից ոչ պակաս կամ ավելի ածխի կամ նավթաբեր թերթաքարի գազաֆիկացման և հեղուկացման գործարաններ:

2. - 300 կամ ավելի մեգավատ հզորությամբ ջերմաէլեկտրակայաններ ու այրման այլ կայաններ և

- ատոմակայաններ և միջուկային այլ ռեակտորներ, այդ թվում՝ այդ կայանների կամ ռեակտորների ապամոնտաժում կամ շահագործման դադարեցում (\*) (բացառությամբ տրոհվող և վերարտադրվող նյութերի արտադրության և փոխարկման ոլորտում գիտահետազոտական ինստիտուտների, որոնց առավելագույն հզորությունը չի գերազանցում 1 կիլովատ շարունակական ջերմային բեռնվածքը):

3. ա) ռադիոակտիվ միջուկային վառելիքի վերամշակման օբյեկտներ:

բ) օբյեկտներ, որոնք նախատեսված են՝

- միջուկային վառելիքի արտադրման կամ հարստացման համար.

- ռադիոակտիվ միջուկային վառելիքի կամ բարձր ռադիոակտիվության թափոնների մշակման համար.

- ռադիոակտիվ միջուկային վառելիքի վերջնական հեռացման համար.

- միայն ռադիոակտիվ թափոնների վերջնական հեռացման համար.

- միայն արտադրամասից բացի այլ կայանքում ռադիոակտիվ միջուկային վառելիքների կամ ռադիոակտիվ թափոնների պահեստավորման համար (ավելի քան տասը տարի):

4. - Թուջի և պողպատի նախնական ձուլման գործարան.

- մետաղագործական, քիմիական կամ էլեկտրոլիտային պրոցեսներով հանքաքարից, մետաղի կոնցենտրատներից կամ երկրորդային հումքից զուսավոր չգտած մետաղների արտադրության գործարաններ:

5. Ասբեստի արդյունահանման, ինչպես նաև ասբեստի և ասբեստի արտադրանքի մշակման ու փոխակերպման գործարաններ`

ասբեստի, ցեմենտի արտադրանքի համար` տարեկան արտադրությունը` 20 000 տոննայից ավելի վերջնական արտադրանք, տրոհման նյութերի համար` տարեկան արտադրությունը` 50 տոննայից ավելի վերջնական արտադրանք և այլ նպատակներով ասբեստի օգտագործման դեպքում` տարեկան 200 տոննայից ավելի օգտագործմամբ:

6. Քիմիական կոմբինատներ, այսինքն` քիմիական փոխարկման պրոցեսների կիրառմամբ նյութերի արդյունաբերական մասշտաբների արտադրության համար այն գործարանները, որտեղ համադրվում են մի շարք արտադրամասեր և միմյանց հետ կապված են ֆունկցիոնալ կապերով, և որոնք նախատեսված են`

i) հիմնական օրգանական քիմիական նյութերի արտադրության համար.

ii) հիմնական անօրգանական քիմիական նյութերի արտադրության համար.

iii) ֆոսֆորի, ազոտի կամ կալիումի վրա հիմնված պարարտանյութերի արտադրության համար (պարզ կամ բարդ պարարտանյութեր).

iv) բույսերի առողջության հիմնական արտադրանքի և բիոցիդների արտադրության համար.

v) քիմիական կամ կենսաբանական պրոցեսների կիրառմամբ հիմնական դեղագործական արտադրանքի արտադրության համար.

vi) պայթուցիկ նյութերի արտադրության համար.

7. ա) 2 100 մետր կամ ավելի ընդհանուր երկարությամբ երկաթուղային մայրուղիների և օդանավակայանների կառուցում (1).

բ) ավտոմայրուղիների և ճեպընթացների համար նախատեսված ճանապարհների կառուցում (2).

գ) չորս կամ ավելի գոտիներով նոր ճանապարհի կառուցում և (կամ) երկու կամ պակաս գոտիներ ունեցող ճանապարհի վերադասավորում և (կամ) ընդլայնում՝ չորս կամ ավելի գոտիներ ավելացնելու նպատակով, որտեղ այդ նոր ճանապարհը կամ ճանապարհի վերադասավորված և(կամ) ընդլայնված հատվածի չընդհատվող երկարությունը կկազմի 10 կամ ավելի կիլոմետր:

8. ա) Ներքին ջրուղիներ և ներքին ջրուղիների համար նախատեսված նավահանգիստներ, որոնք տալիս են 1 350 տոննա բեռնատարողությամբ նավերի անցման հնարավորություն.

բ) սեփական նավահանգիստների և ավանպորտերի հետ կապված առևտրային նավահանգիստներ, բեռնման և բեռնաթափման կառանման պիրսեր (բացառությամբ լաստանավի կառանման տեղեր), որոնք ունեն 1 350 տոննա բեռնատարողությամբ նավի թողունակություն:



(\*) Ատոմակայանները և այլ միջուկային ռեակտորներ դադարում են այնպիսի կառուցվածք լինելուց, որտեղ բոլոր միջուկային վառելիքները և մյուս ռադիոակտիվ նյութերով աղտոտված տարրերը պարբերաբար հեռացվել են կառուցվածքի տեղանքից:

1) Սույն Հրահանգի նպատակներով «օդանավակայան» նշանակում է այնպիսի օդանավակայաններ, որոնք համապատասխանում են «Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն հիմնելու մասին» 1944 թվականի Չիկագոյի կոնվենցիայի սահմանմանը (Հավելված 14):

2) Հրահանգի նպատակներով «ճեպընթացների համար նախատեսված ճանապարհ» նշանակում է այնպիսի ճանապարհ, որը համապատասխանում է «Հիմնական միջազգային ավտոտրանսպորտային մայրուղիների մասին» 1975 թվականի նոյեմբերի 15-ի եվրոպական պայմանագրի սահմանմանը:

9. Դ9 վերնագրի համաձայն՝ 75/442/ԵՏՀ հրահանգի II Ա հավելվածով սահմանված՝ այրելու, քիմիական վերամշակման համար թափոնների հեռացման գործարաններ կամ վտանգավոր քիմիական նյութերի գերեզմանոց (այսինքն՝ թափոն, որի նկատմամբ կիրառվում է 91/689/ԵՏՀ (2) հրահանգը):

10. Դ9 վերնագրի համաձայն՝ 75/442/ԵՏՀ հրահանգի II Ա հավելվածով սահմանված կարգով այրման կամ քիմիական վերամշակման համար՝ օրական 100 տոննան գերազանցող հզորությամբ ոչ վտանգավոր թափոնների հեռացման գործարաններ:

11. Ստորգետնյա ջրերի դուրս բերման կամ ստորգետնյա ջրերի պաշարների արհեստական լրացման պլաններ, որտեղ դուրս բերված կամ լրացված ջրերի տարեկան ծավալը կազմում կամ գերազանցում է 10 մլն խորանարդ մետրը:

12. ա) Գետերի ավազանների միջև ջրային ռեսուրսների փոխանցման գործարաններ, որտեղ այդ փոխանցումն ուղղված է հնարավոր

սակավաջրության կանխարգելմանը, և որտեղ փոխանցվող ջրերի քանակը տարեկան կտրվածքով գերազանցում է 100 մլն խորանարդ մետրը.

բ) մնացած բոլոր դեպքերում գետերի ավազանների միջև ջրային ռեսուրսների փոխանցման գործարաններ, որտեղ ջրերի դուրս բերման ավազանի մի քանի տարեկան միջին հոսքը գերազանցում է 2 000 մլն խորանարդ մետրը, և որտեղ փոխանցվող ջրի քանակը գերազանցում է այդ հոսքի 5 %-ը:

Երկու դեպքում էլ բացառվում են ջրատարներով խմելու ջրի փոխանցումները:

13. 91/271/ԵՏՀ հրահանգի (3) 2-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված՝ 150 000 բնակչից ավելի բնակչություն սպասարկող՝ կեղտաջրերի մշակման կայաններ:

14. Առևտրային նպատակներով բենզինի և բնական գազի արդյունահանում, եթե արդյունահանված քանակը գերազանցում է օրական 500 տոննան՝ բենզինի դեպքում և օրական 500 000 խորանարդ մետրը՝ գազի դեպքում:

15. Պատվարներ և այլ կայաններ, որոնք նախատեսված են ջրապահման կամ մշտական ջրամբարների համար, որտեղ պահված կամ պահպանված ջրի նոր կամ լրացուցիչ քանակը գերազանցում է 100 մլն խորանարդ մետրը:

16. 800 մմ-ը գերազանցող տրամագծով և 40 կմ-ից ավելի երկարությամբ ջրատարներ՝ նախատեսված գազի, նավթի կամ քիմիական նյութերի փոխադրման համար:

17. Թռչունների կամ խոզերի՝ ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաներով բուծման համար ֆարրիկաներ, ավելի քան՝

ա) 85 000 տեղ՝ բրոյլերների, 60 000 տեղ՝ հավերի համար.

բ) 3 000 տեղ՝ արտադրության համար նախատեսվող խոզերի (30 կգ-ից ավելի) համար, կամ

գ) 900 տեղ՝ սերմերի համար:

18. Արդյունաբերական գործարաններ

ա) փայտանյութից կամ նմանատիպ թելքային նյութերից խեժ/թելքավոր մասսա արտադրելու համար.

բ) օրական 200 տոննան գերազանցող արտադրական կարողությամբ թղթի և տախտակի արտադրություն:

19. Քարհանք և բաց արդյունահանում, որտեղ կայանքի մակերեսը գերազանցում է 25 հեկտարը և տորֆի արդյունահանում, որտեղ կայանքի մակերեսը գերազանցում է 150 հեկտարը:

20. 220 կՎ կամ ավելի հզորությամբ և 15 կմ ու ավելի երկարությամբ բարձր լարման էլեկտրազծերի կառուցում:

21. Բենզինի, նավթաքիմիական կամ քիմիական արտադրանքի՝ 200 000 տոննա և ավելի պահեստներ:

1) ՊՏ թիվ L 194, 25.07.1975թ., էջ 39. Հանձնաժողովի 94/3/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 5, 07.01.1994թ., էջ 15):

2) ՊՏ թիվ L 377, 31. 12. 1991թ., էջ 20: Վերջին անգամ 94/31/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 168, 02. 07. 1994թ., էջ 28):

3) ՊՏ թիվ L 135, 30.05. 1991թ., էջ 40: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:

## ՀԱՎԵԼՎԱԾ II

### 4 (2) ՀՈԴՎԱԾԻՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԳԾԵՐԸ

1. Գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ակվակուլտուրա

ա) գյուղական հողատարածքների վերակազմավորման նախագծեր.

բ) ինտենսիվ գյուղատնտեսության նպատակներով չմշակված հողի կամ կիսաբնական տարածքների օգտագործման նախագծեր.

գ) գյուղատնտեսության ոլորտի ջրային ռեսուրսների կառավարման ծրագրեր, այդ թվում՝ հողերի ոռոգման և դրենաժային ծրագրեր.

դ) նախնական անտառապատում և անտառահաստում՝ հողօգտագործման մեկ այլ տեսակի անցնելու նպատակով.

ե) խոշոր եղջերավոր անասունների համար ինտենսիվ կառուցվածքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

զ) ինտենսիվ ձկնաբուծություն.

է) ծովից հողի մելիորացիա:

2. Արդյունահանող արդյունաբերություն

ա) քարհանքեր, բաց արդյունահանում և տորֆի արդյունահանում (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

բ) ստորգետնյա արդյունահանում.

գ) ծովային կամ գետային հողահանման միջոցով հանքարդյունահանում.

դ) խորը հորատումներ, մասնավորապես՝

- երկրաջերմային հորատում.

- միջուկային թափոնների պահեստավորման համար հորատում.

- ջրերի պաշարների համար հորատում՝

բացառությամբ հողի կայունությունն ուսումնասիրելու նպատակով կատարվող հորատումների.

ե) ածխի, բենզինի, բնական գազի և հանքաքարի, ինչպես նաև թերթաքարի արդյունահանման համար վերգետնյա արդյունաբերական կառուցվածքներ:

### 3. Էներգետիկ արդյունաբերություն

ա) Էլեկտրականության, գոլորշու և տաք ջրի ստացման համար արդյունաբերական կառուցվածքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

բ) գազ, գոլորշի և տաք ջուր փոխադրելու, օդային գծերի միջոցով էլեկտրաէներգիայի փոխանցման համար նախատեսվող արդյունաբերական կառուցվածքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

գ) բնական գազի վերգետնյա պահեստարան.

դ) պայթուցիկ գազերի ստորգետնյա պահեստարան.

ե) հանածո վառելիքների վերգետնյա պահեստարան.

զ) ածխի և լիգնիտի արդյունաբերական բրիկետավորում.

է) ռադիոակտիվ թափոնների մշակման և պահեստավորման համար կառուցվածքներ (եթե ընդգրկված են I հավելվածում).

ը) հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքներ.

թ) էներգիայի արտադրության համար քամու էներգիան օգտագործելու կառուցվածքներ (հողմակայաններ):

### 4. Մետաղների արտադրություն և վերամշակում

ա) սվինային թուջի կամ պողպատի արտադրության կառուցվածքներ (առաջնային կամ երկրորդային հալում), այդ թվում՝ շարունակական ձուլակաղապարում.

բ) սև մետաղների մշակման կառուցվածքներ՝

i) տաք գլոցման արտադրամասեր.

ii) մուրճերով դարբնոցներ.

iii) ձուլված մետաղի պաշտպանիչ պատվածքների կիրառում.

գ) սև մետաղների ձուլման արտադրամասեր.

դ) գունավոր մետաղների, բացառությամբ թանկարժեք մետաղների, այդ թվում՝ վերականգնված արտադրանքի (վերամշակում, երկաթապատում և այլն) հալման, այդ թվում՝ լեգիրման կառուցվածքներ.

ե) էլեկտրոլիտիկ կամ քիմիական պրոցեսի կիրառմամբ մետաղների և պլաստիկ նյութերի վերգետնյա մշակման կառուցվածքներ.

զ) մեքենաների արտադրություն ու հավաքում և մեքենաների շարժիչների արտադրություն.

է) նավանորոգարաններ.

ը) օդանավակայանների կառուցման և վերանորոգման կառուցվածքներ.

թ) երկաթուղային սարքավորումների արտադրություն.

ժ) պայթուցիկ նյութերով ջրասեղմումներ.

ժա) մետաղական հանքանյութի վառման և թրծման կառուցվածքներ:

## 5. Հանքարդյունաբերություն

ա) կոքսի վառարաններ (ածխի չոր թորում).

բ) ցեմենտի արտադրության կառուցվածքներ.

գ) ասբեստի արտադրության և ասբեստից ստացվող արտադրանքի արտադրության կառուցվածքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

դ) ապակեթերթ ներառող ապակու արտադրության կառուցվածքներ.

ե) հանքային նյութերի հալման, ինչպես նաև հանքային թելքերի արտադրության կառուցվածքներ.

զ) վառման միջոցով կերամիկական արտադրանքի, մասնավորապես, տանիքի կղմինդրի, աղյուսների, կղմինդրների, կերամիկայի կամ ճենապակու (ֆարֆոր) արտադրություն:

#### 6. Քիմիական արդյունաբերություն (I հավելվածում չընդգրկված նախագծեր)

ա) Միջանկյալ արտադրանքի մշակում և քիմիական նյութերի արտադրություն.

բ) պեստիցիդների և դեղագործական արտադրանքի, ներկերի և լաքերի, էլաստոմերի և պերօքսիդների արտադրություն.

գ) բենզինի, նավթաքիմիական և քիմիական արտադրանքի պահեստավորման կառուցվածքներ:

#### 7. Մանրի արդյունաբերություն

ա) Բանջարեղենի և կենդանական յուղերի ու ճարպերի արտադրություն.

բ) կենդանական ու բուսական արտադրանքի փաթեթավորում և պահածոյացում.

գ) կաթնամթերքի արտադրություն.

դ) գարեջրագործություն և ածիկացում

ե) հրուշակեղենի և սիրոպի արտադրություն.

զ) կենդանիների սպանդի համար կառուցվածքներ.

է) արդյունաբերական օսլայի արտադրության կառուցվածքներ.

ը) ձկնամթերք և ձկնայուղի արտադրության գործարաններ.

թ) շաքարի գործարաններ.

## 8. Տեքստիլ, կաշվի, փայտի և թղթի արդյունաբերություններ

ա) Թղթի և տախտակի արտադրության գործարաններ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

բ) Թելքերի կամ տեքստիլ արտադրանքի նախամշակման կամ չորացման գործարաններ (այնպիսի աշխատանքներ, ինչպես օրինակ՝ լվացում, սպիտակեցում, ակալացում).

գ) կաշվի և մաշկի գունավորման գործարաններ.

դ) ցելյուլոզի մշակման և արտադրման կառուցվածքներ:

## 9. Կաուչուկի արդյունաբերություն

Էլաստոմերի վրա հիմնված արտադրանքի արտադրություն և մշակում:

## 10. Ենթակառուցվածքային նախագծեր

ա) Արդյունաբերական տարածքների զարգացման նախագծեր.

բ) քաղաքային զարգացման նախագծեր, այդ թվում՝ առևտրի կենտրոնների և ավտոկայանատեղիների կառուցում.

գ) երկաթուղիների և ինտերմոդալ բեռնահամալիրների ու ինտերմոդալ բեռնափոխադրման տերմինալների կառուցում (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

դ) օդանավակայանների կառուցում (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

ե) ճանապարհների, նավահանգիստների և նավահանգստային կառուցվածքների, այդ թվում՝ ձկնորսական նավահանգիստների կառուցում (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

զ) I հավելվածում չընդգրկված վերգետնյա ջրուղիների կառուցում, կոյուղավորման և հորդացման նվազմանն ուղղված կառուցվածքներ.



է) երկարատև ժամկետով ջուր պահելու կամ պահեստավորելու համար նախատեսված պատվարներ և այլ կառուցվածքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

ը) տրամվայներ, վերգետնյա և ստորգետնյա երկաթուղիներ, կախովի գծեր կամ նմանատիպ այլ գծեր, որոնք օգտագործվում են բացառապես կամ հիմնականում ուղևորների փոխադրման համար.

թ) նավթի և գազի խողովակների սարքավորումներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

ժ) երկար տարածության վրա ջրատարների կառուցվածքներ.

ժա) էրոզիայի դեմ պայքարելու համար նախատեսված ափամերձ կառուցվածքներ և ծովային կառուցվածքներ, որոնք կարող են փոփոխության ենթարկել ափը՝ կառուցելով, օրինակ՝ պատվարներ, պիրսեր, չորսուներ ու պաշտպանական պարիսպներ և այլ կառուցվածքներ՝ բացառությամբ այդ կառուցվածքների պահպանման և վերանորոգման.

ժբ) գրունտային ջրերի դուրս բերման և ստորգետնյա ջրերի պաշարների արհեստական լրացման պլաններ, որոնք ընդգրկված չեն I հավելվածում.

ժգ) I հավելվածում չընդգրկված գետի ավազանների միջև ջրային ռեսուրսների փոխանցման կառուցվածքներ:

## 11. Այլ նախագծեր

ա) Մեխանիկական տրանսպորտային միջոցների համար նախատեսվող մրցարշավի և փորձարկման ճանապարհներ.

բ) թափոնների հեռացման կառուցվածքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

գ) կեղտաջրերի մշակման գործարաններ (I հավելվածում չընդգրկված նախագծեր).

դ) տիղմի թաղման տեղանքներ.

ե) մետաղի ջարդոնների, այդ թվում՝ ջարդոնների վերածված տրանսպորտային միջոցների պահեստ.

զ) շարժիչների, տուրբինների կամ ռեակտորների փորձարկման կառուցվածքներ.

է) արհեստական հանքային թելքերի արտադրության կառուցվածքներ.

ը) պայթուցիկ նյութերի վերականգնման կամ վերացման կառուցվածքներ.

թ) սպանդանոցներ:

## 12. Զբոսաշրջություն և հանգիստ

ա) դահուկների համար ճանապարհներ, դահուկորդների համար ամբարձիչներ և թեք վերելքով լարավոր երկաթուղիներ ու այլ հարմարանքներ.

բ) ծովային հարմարանքներ.

գ) քաղաքային տարածքներից դուրս ամառանոցային ավաններ և հյուրանոցային համալիրներ ու այլ կառույցներ.

դ) մշտական վրանաշեն ավաններ և տուն-ֆուրգոնների ավաններ.

ե) հանգստի այգիներ.

13. - I կամ II հավելվածներում թվարկված նախագծերի ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում՝ արդեն թույլատրված, իրականացված կամ իրականացման ընթացքում գտնվող, որը կարող է զգալի բացասական ազդեցություններ ունենալ շրջակա միջավայրի վրա.

- I հավելվածում ընդգրկված նախագծեր, որոնք բացառապես կամ հիմնականում նախաձեռնվել են նոր մեթոդների կամ արտադրանքի մշակման ու փորձարկման համար և, որոնք չեն կիրառվել երկու տարուց ավելի:

## ՀԱՎԵԼՎԱԾ III

### 4 (3) ՀՈՂՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

#### 1. Նախագծերի բնութագրերը

Նախագծերի բնութագրերը կարող են դիտարկվել, մասնավորապես, հաշվի առնելով հետևյալը՝

- ծրագրի մասշտաբը.
- այլ նախագծերի հետ խմբավորումը.
- բնական ռեսուրսների օգտագործումը.
- թափոնների արտադրությունը.
- աղտոտումը և անցանկալի մյուս երևույթները.
- պատահարների ռիսկը՝ մասնավորապես հաշվի առնելով օգտագործված նյութերը կամ տեխնոլոգիաները:

#### 2. Նախագծերի տեղակայման վայրը

Անհրաժեշտ է հաշվի առնել աշխարհագրական այն տարածքները, որոնք բնապահպանական տեսանկյունից խոցելի են և կարող են ազդեցություն կրել իրականացվող նախագծերից, մասնավորապես, հաշվի առնելով հետևյալը՝

- առկա հողօգտագործումը.
- տվյալ տարածքում բնական ռեսուրսների համեմատական առատությունը, որակն ու վերականգնման կարողությունը.
- բնական միջավայրի կլանման կարողությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հետևյալ տարածքներին՝

ա) ճահճացած հողեր.

բ) ավիամերձ գոտիներ.

գ) լեռնային և անտառային տարածքներ.

դ) արգելոցներ և զբոսայգիներ.

ե) անդամ պետությունների օրենսդրության համաձայն դասակարգված կամ պաշտպանված տարածքներ, 79/409/ԵՏՀ և 92/43/ԵՏՀ հրահանգի համաձայն՝ անդամ պետությունների կողմից սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքներ.

զ) տարածքներ, որտեղ արդեն չեն պահպանվում Համայնքի օրենսդրությամբ սահմանված շրջակա միջավայրի որակի ստանդարտները.

է) խիտ բնակեցված տարածքներ.

ը) պատմական, մշակութային կամ հնէաբանական կարևորության լանդշաֆտներ:

### 3. Հնարավոր ազդեցության բնութագրերը

Ծրագրի հնարավոր զգալի ազդեցությունները պետք է ուսումնասիրվեն՝ կապված նշված 1-ին և 2-րդ կետերով սահմանված չափորոշիչների հետ և հաշվի առնելով մասնավորապես՝

- ազդեցության մասշտաբը (աշխարհագրական տարածք և ազդակիր բնակչության չափը).
- ազդեցության միջսահմանային բնույթը.
- ազդեցության ծավալն ու բարդությունը.
- ազդեցության հավանականությունը.
- ազդեցության տևողությունը, հաճախականությունը և հետադարձելիությունը:

## ՀԱՎԵԼՎԱԾ IV

### 5(1) ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ծրագրի նկարագրությունը, մասնավորապես նաև՝

- ընդհանուր ծրագրի ֆիզիկական բնութագրի նկարագրությունը և կառուցման ու շահագործման փուլերում հողօգտագործման նկատմամբ ներկայացվող պահանջները.

- արտադրական գործընթացների հիմնական բնութագրերի նկարագրությունը, օրինակ՝ օգտագործվող նյութերի բնույթն ու քանակը.

- առաջարկվող ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող մնացորդների և արտանետումների գնահատումը՝ ըստ տեսակի և քանակի (ջրի, օդի և հողի աղտոտում, աղմուկ, վիբրացիա, լույս, ջերմություն, ճառագայթում և այլն):

2. Նախագիծ մշակողի կողմից ուսումնասիրվող հիմնական այլընտրանքային եղանակների նկարագիրը և տվյալ ընտրության համար հիմնական պատճառների նշումը՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա թողած ազդեցությունները:

3. Շրջակա միջավայրի այն հայեցակետերի նկարագրությունը, որոնք կարող են զգալի ազդեցություն կրել առաջարկվող ծրագրի կողմից, այդ թվում՝ մասնավորապես բնակչությունը, կենդանական ու բուսական աշխարհը, հողը, ջուրը, օդը, կլիմայական գործոնները, նյութական ակտիվները՝ ներառյալ ճարտարապետական և հնագիտական ժառանգությունը, լանդշաֆտը և վերը նշված գործոնների միջև փոխհարաբերությունը:

4. Ա. Շրջակա միջավայրի վրա առաջարկվող ծրագրի հնարավոր զգալի ազդեցությունների նկարագրությունը (1), որոնք բխում են՝

- ծրագրի առկայությունից.

- բնական ռեսուրսների օգտագործումից.

- աղտոտիչների արտանետումից, կեղտի առաջացումից և թափոնների վերացումից.

և շրջակա միջավայրի ազդեցությունները գնահատելու համար կիրառվող կանխատեսման մեթոդների՝ նախագիծ մշակողի կողմից նկարագրությունը:

5. Շրջակա միջավայրի վրա զգալի բացասական ազդեցությունները կանխելու, նվազեցնելու և, հնարավորության դեպքում, կասեցնելու համար նախատեսվող միջոցների նկարագրությունը:

6. Նշված վերնագրերի ներքո ներկայացվող տեղեկությունների ոչ տեխնիկական բնույթի ամփոփագիրը:

7. Ցանկացած դժվարության (տեխնիկական բացթողումներ կամ նոու-հաուի բացակայություն) մասին նշումը, որոնց պահանջվող տեղեկությունները հավաքելիս բախվում են նախագիծ մշակողները:

1) Սույն նկարագրությունը պետք է ներառի ծրագրի ուղղակի, ցանկացած անուղղակի, երկրորդային, կուտակային, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, մշտական ու ժամանակավոր, դրական և բացասական ազդեցությունները: